

Հայաստանի Թէ Հայկական Հարցի Ծուրջ Վաւերագրական Ժապաւէն Իսրայէլի Առաջին Աւիքէն

Շաբաթ, 1 Հոկտեմբեր 2005ի երեկոյեան, Իսրայէլեան առաջին աւիքի վրայ սփռուող «Ռօիմ Օլամ» (Կը Տեսնենք Աշխարհ) լուստուական ծրագրի ընթացքին, Հայաստանի ներկայ արօրեային թէ Հայոց Ցեղասպանութեան վերաբերող կարճ (11 վայրկեան) նոր պատրաստուած վաւերագրական ժապաւէն մը ներկայացուեցաւ:

Ժապաւէնը կ'անդրադարձար Հրեայ թղթակիցի մը, Իթայ Ցիցիանօ անուն, պտոյտին Երեւան, ուր ան կ'այցելէր Սարդարապատի յուշարձան-թանգարան, Ծիծեռնակաբերդ, Մատենադարան, կեդրոնական շուկայ եւայլն: Ան կը հանդիպէր Հայ ակադեմականներու թէ պատմաբաններու, որոնք Հայոց հողային թէ Թուրքիայէ հատուցման պահանջներուն կ'անդրադարձային:

Թղթակից Ցիցիանօն, ընդհանուր առմամբ բացարցակ, համակրական, չ'ըսելու զօրակցական ոճով կը ներկայացնէր իր ստացած տպաւորութիւնները Հայաստանէն:

«Ռօիմ Օլամ» ծրագրի պատասխանատու ու ներկայացնող Հայասեր Իսրայէլացի թղթակից քաջածանօթ դէմք, Եագօվ Ախիմէիր, ֆիլմին վերաբերող իր պարբերականի մէջ ցատումով կարտայայտուի մինչեւ ցարդ Հայոց Ցեղասպանութեան փաստին վերաբերող Իսրայէլի պետական կեցուածքին թէ մերժումին նշելով այն թէ այսօր Արեւմտեան 19 պետութիւններու խորհրդարաններ թէ 39 Ամերիկեան նահանգային խորհուրդներ ընդունած են այս փաստը ու դատապարտած Թուրքիան մինչ Իսրայէլ դեռ սպասողական վիճակի է. Արդեօք՝ մինչեւ երբ:

Կը շնորհաւորենք Տիար Եագօվ Ախիմէիրը նախ անոր համար որ իր խօսքը Իսրայէլի վերաբերող հաստատումը աւելի պահանջքի տպաւորութիւն կը թողուր, առաւել այդ Հայաստանի հիմնադրութենէ, 1991է մինչեւ օրս առաջին բացարապէս Հայանպաստ "բրօ Հայ" ներկայացումն էր, որուն կը հետեւէինք Իսրայէլեան պետական նեղուցէն: